

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՅԵՐՈՐԴ
ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (11.09.2017 - 21.12.2017)
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 հերթական և 2 արտահերթ նիստ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 57 հարց, որից 54-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 2-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների (1-ը ՀՀ ԱԺ որոշման նախագիծ), իսկ 1-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր (կառավարության ներկայացմամբ):

Հետագայում, հերթական նիստերի ընթացքում, նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 68 հարցով, իսկ արտահերթ նիստերի ընթացքում՝ ևս 19-ով, որից՝ 70-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն (4-ը անհետաձգելի), 15-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 2-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 144 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 143-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, իսկ 1-ը «Ելք» խմբակցության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության մասով Եվրասիական Տնտեսական Միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագիծ, որոնցից աշնանային նստաշրջանի ընթացքում գումարված հերթական և արտահերթ նիստերի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 115-ը, որոնցից

111-ը՝ ՀՀ կառավարության, իսկ 4-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին:

Նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների նախագծերից հատկապես հիշարժան են Հարկային օրենսգիրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որի նպատակը մինչև ՀՀ հարկային օրենսգրքի ամբողջական կիրառության մեջ մտնելը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված առանձին իրավական նորմերի վերանայումն է՝ շահաբաժինների հարկման մասով, նվազագույն շահութահարկի մասով, եկամտային հարկի հաշվին հիպոտեկային վարկի տոկոսների փոխհատուցման մասով, հանրային սննդի ոլորտի հարկման մասով, դիզելային վառելիքի՝ ԱԱՀ-ով հարկման մասով, բազմակի օգտագործման տարաների հարկման մասով, ծախսերի փաստաթղթավորման մասով, գործարքների ճշգրտման և չեղարկման մասով, ապրանքների տեղափոխության փաստաթղթավորման մասով, Հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների մասով, ԵՏՄ միասնական օրենսդրությամբ անմաքս առևտրի խանութների համար սահմանված արտոնությունների կիրառության շարունակականության մասով և այլն, ինչպես նաև սոցիալական արդարության բաղադրմասին ավելի մեծ ուշադրություն դարձնելը:

Ընտանիքի ինստիտուտը ամրապնդելու նպատակով Ազգային ժողովի կողմից ընդունվել են Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, ինչպես նաև Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքի նախագիծը: Այս օրենքները կոչված են, պահպանելով հայկական ավանդույթները, ավելի ամուր դարձնելու հայ ընտանիքը և զերծ պահելու այն բռնությունից: Շատ կարևոր և հայեցակարգային օրենքներ են ընդունվել նաև ռազմական ոլորտում՝ ի դեմս Պաշտպանության մասին և Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենքների: Վերջիններիս ընդունմամբ բավական մեծ փոփոխություններ կատարվեցին

զինապարտության ինստիտուտում, հստակեցվեցին կամավորականության սկզբունքները, ինչպես նաև լուրջ և գործուն քայլեր նախատեսվեցին ազգ-բանակ կոնցեպտին անցման համար: Ոչ պակաս կարևոր օրենքներ ընդունվեցին նաև բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Այստեղ հիշարժան են «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Ընդերքի մասին» օրենքներում փոփոխությունների կատարումը, ինչպես նաև ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը: Վերջինիս ընդունմամբ կարգավորվելու է կոյուղային ջրերի հեռացման համակարգը, ստորգետնյա քաղցրահամ ջրերի օգտագործման համար հորատման խնդիրները կարգավորվելու են լիցենզիայի տրման միջոցով, իսկ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխությունների կատարմամբ ձևավորվելու են նոր մեխանիզմներ ընդերքօգտագործման ժամանակ բնությանը հասցված վնասի՝ առավելագույնս նվազեցման ուղղությամբ: Բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հեղափոխական էր նաև «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի նախագծի ընդունումը, որով ակնկալվում է միջնաժամկետ հեռանկարում էներգետիկ համակարգում նորագույն և մաքուր («կանաչ») տեխնոլոգիաների կիրառում, սրա շնորհիվ հնարավոր կլինի նաև նվազեցնել կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքներից: Հիշարժան են նաև երկու սահմանադրական օրենքների՝ Դատական օրենսգրքի և Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի նախագծերի, առաջին ընթերցմամբ ընդունումը, իսկ սահմանադրական մեկ այլ՝ «Հանրաքվեի մասին» օրենքի նախագիծը արդեն ներկայացվել է Ազգային ժողովի քննարկմանը: Այս օրենքների ընդունումը սահմանադրական փոփոխություններից բխող, Ազգային ժողովի նախորդ գումարման ընթացքում ընդունված, մյուս չորս սահմանադրական օրենքերի տրամաբանական շարունակությունն է:

ԱԺ-ն նաև քննարկեց և քվեարկությամբ մերժեց ԱԺ պատգամավորների 3 օրենսդրական նախաձեռնությունների Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ

ընդգրկելու հարցը: Երեք օրենսդրական նախաձեռնություններից 2-ը «Ծառուկյան դաշինքի» պատգամավորների նախաձեռնություններն էին, 1-ը՝ «Ելք» դաշինքի: Նստաշրջանի ընթացքում քննարկվել և մերժվել է «Ելք» խմբակցության հեղինակած 1 ԱԺ որոշման նախագիծ, որը հեղինակները «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն համարել էին արտահերթ: Որոշումը վերաբերում էր «Հայաստանի Հանրապետության մասով Եվրասիական Տնտեսական Միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի հայտարարության նախագծի վերաբերյալ ազգային ժողով եզրակացություն ներկայացնելու համար ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելուն:

Նստաշրջանի ընթացքում՝

- քննարկվեց և 64 կողմ, 35 դեմ ձայներով ընդունվեց Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին օրենքը.
- քննարկվեց և 61 կողմ, 6 դեմ, 16 ձեռնպահ ձայներով ընդունվեց Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2016 թվականի տարեկան հաշվետվությունը.
- քննարկվեց և 91 կողմ 7 դեմ, 0 ձեռնպահ ձայներով հաստատվեց Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիրը.

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 81 բանավոր հարցով: Հնչել է 67 պատգամավորական հայտարարություն, որոնցից 33-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանի ընթացքում ընդունվեց 38 միջազգային պայմանագիր վավերացնելու մասին օրենքի նախագիծ (սահմանադրական փոփոխություններով պայմանավորված միջազգային պայմանագրերը այլևս վավերացվում են ոչ թե ԱԺ որոշմամբ, ինչպես նախկինում, այլ օրենքով): Այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության

կառավարության միջև Մեղրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործման մասին» համաձայնագիրը: Այս համաձայնագիրը արտահայտում է Հայաստանի Հանրապետության ցանկությունները մեծացնելու ապրանքաշրջանառությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ և այս գործում մեծ քայլ կլինի Մեղրի-Նուրդուզ սահմանային դարպասի համատեղ օգտագործումը: Մաքսային կարգավորումների ոլորտում մյուս կարևոր համաձայնագիրը դա «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վավերացումն է, որով Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքը ներդաշնակեցվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի հետ: Ներդրումների ներգրավման տեսակետից կարևոր էին նաև Հայաստանի Հանրապետություն նախագահի Մերձավոր Արևելք կատարած պաշտոնական այցի արդյունքում վավերացված համաձայնագրերը՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունների հետ: Ներդրումային մեկ այլ համաձայնագիր էլ վավերացվեց Ասիական զարգացման բանկի հետ, որի միջոցով Հայաստանի Հանրապետությունը ստացավ Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու շինարարության համար հերթական տրանշները: Երկրի ռազմական անվտանգության ամրապնդման տեսակետից ռազմավարական նշանակություն ունեն «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին» համաձայնագրի վավերացումը, իսկ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ստացավ արտոնյալ պայմաններով և 100 միլիոն դոլլարի սահմաններում, ձեռք բերելու ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանք: